ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» «----------» 2017թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 9-ի «Գույքի նվիրատվության և անհատույց օգտագործման իրավունքով հողամաս տրամադրելու մասին» հ.106-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Ազատության պողոտայի հ.1/16 հասցեում գտնվող, 369.75քմ մակերեսով հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Ազատության պողոտայի հ.1/16 հասցեում գտնվող 369.75քմ մակերեսով հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

Ազատության պողոտայի հ.1/16 հասցեում գտնվում է Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանության սեփականությունը հանդիսացող շենքը և դրանով ծանրաբեռնված և սպասարկման համար ծառայող հողամասը, որտեղ նախատեսվում է տեղակայել դեսպանի կեցավայրը:

Քննարկվող հատվածում թաղամասի բնականոն զարգացման, տարածքի արդյունավետ օգտագործման, ներթաղամասային ճանապարհի ապահովման և քաղաքաշինական առումով առավել կանոնակարգված հատված ստեղծելու նպատակով՝ Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ.649-Ա որոշմամբ՝ Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանությանը պատկանող հողամասի մի հատվածը փոխանակվել էր հարակից տարածքում գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող համարժեք հողամասի հետ:

Ներկայումս, շարունակելով տարածքի ամբողջական քաղաքաշինական իրավիճակի հստակեցման գործընթացը, ինչպես նաև նկատի ունենալով, որ քննարկվող 369.75քմ մակերեսով հողամասն օգտագործվում է դեսպանության կողմից, գտնվում է պարսպապատված տարածքի ներսում և օտարման ենթակա չէ, ապա անհրաժեշտություն է առաջացել ձևակերպելու դրա նկատմամբ Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանության օգտագործման իրավունքը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ գործող օրենսդրության համաձայն կայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 9-ի հ.106-Ա որոշումը, որով առաջարկվել է Երևան քաղաքապետին հարցի վերջնական կարգավորման նպատակով Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնել 369.75քմ մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին որոշման նախագիծը, որի ընդունումից հետո միայն հնարավոր կլինի ձևակերպել դեսպանության անհատույց օգտագործման իրավունքը՝ պահպանելով փոխադարձության սկզբունքը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամաս նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամաս նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ